Աղէքս, Մակեդոնացու կենսագրութեան Հայերէն թարգմանութիւնն օտար պիտի չլինէր մեր պատմութեան, ինչ-որ թէ ենթիրը միայն "էշն, բլլար։ Երբ ամբողջ գործը կցկցած է խորենացի կապելիք թեներով վկպէն, զարմանք է կարգալը նոյն տեղոյ համար թէ այն գիրքն "օտար պիտի չլինէր" պատմագրին։ Ա.յս արդէն կը ցուցնէ թէ սրչափ քիչ գործածուած են Ցունօրութեանցս մէջ բազմաթիւ նորագոյն գրութիւնները, եւ թէ որչափ բան անոնց մէջ այսօր ալ 'հիմնովին" բարեփոխելու պէտք ունին։ Սակայն թոզուենք այս վերջին կէտն ալ, քանի որ մեր նպատակը չէ այս կարգի թերութեանց եւ անճշտութեանց լիակատար ցուցակ մը կազմել հոս։ Մեր նպատակին համար՝ յառաջ բերուած օրինակներն ալ բաւական են։

Ի վերջոյ երկրորդ տպագրութեան մէջ ալ կան քանի մը յաւելուածք. (էջ 503—557.) առաջինն՝ խորենացւոյ ենթագրեալ Չորրորդ Գիրքն հատած մը, երկրորդ՝ Համառօտ Աշխարհացոյց Հայոց աշխարհին, երրորդ՝ ժամանակագրական ցուցակ մը (ըստ Ջամչեանի եւ Սէն-Մարտէնի), չորրորդ՝ Ցիգրանայ մասին Քանեռփռնի պատմածն իւր կիսախարտուն մէջ ("կիւրտպեդիայից") եւ հինգերորդ՝ քաղուածք մը բեւեռագիր արձանագրութիւններ Դաթեհի։ Երկրորդ տպագրութիւնս վեցերորդ յաւելուած մ'ալ ունի, այսինքն է գրաբար բնագիրն սա գրութեան՝ "Սբբոց վարդապետացն Հայոց Մովսէսի եւ Դաւթի Հարցմունքք ընդ երկաբնակ չարաչարսն.," (էջ 537—557.) Ա.յս բնագիրն օրինակած է Տաճատրակիչն Էվմիածնի թ. 2048,15 ձեռագրէն ('Էսկաց գիրք") եւ օրինակելէն վերջը տեղեկացած է որ տպուած ալ կայ այս վերնագրով՝ "Գիրք հակաճառականաց" եւն, (տպ. Ջուղայ, 1688) "ձեռագրի հետ գրեթէ համաժամանակ։" Նոյնը տպագրած է նաեւ Գր. եպ. Սրուանձտեանց (տես "Հնոց Նորոց", Ն.Պ. 1874, էջ 39—74.) եւ սոսը մասին գիտցուած թիւններ ըրած Հայագէտն Կոնիբէր. ("Քննութիւնք գոց Դաւթի Անյաղթի. եւն, էջ 16—21.) ձեռագիրը ալ պակաս չեն։ (Տմմին. "Յուշակ", էջ 479 եւ 1078. Մեր ձեռագիրը թերի է։) Սակայն վերոյիշեալ տպագրութիւնքն այսօր գործածելի համաձայնելի ըլլալով՝ գէշ գաղափար չէր նոյն բնագիրը կրկին տպագրել Խորենացւոյ գրոց իբրեւ յաւելուած, մանաւանդ որ գրութեան մէջ պատմութիւնները հաւասարապէս Դաւթի Անյաղթի եւ Խորենացւոյ մասին են։ Պատմական մեծ արժէք մը չունի ի հարկէ. ամբողջն արդէն կրօնական վէճերու առթիւ յօրինուած անթիւ կեղծայօգ գրութիւններէն է, (մանաւանդ վիճաբանական բաժինը) բայց ունի նաեւ քանի մը հետաքրքրական կէտեր։

Մեր մատենախօսական տեսութիւնն՝ որ շատ երկարեցաւ, չկրնար՝ Կարի կը Համարիւք կրկնել որ Խորենացւոյ աշխարհագրութիւնը նաեւ իւր արդի ձեւին մէջ, շատ օգտակար եւ ընդհանրապէս խնամով պատրաստուած գործ մըն է։ Եթէ այլեւայլ թերութիւններ մնանային՝ ընելու չնաացիք, յօդուտ գրքին էր՝ յուսալով որ մեր քանի մը դիտողութիւնքն առիթ կուտան հեղինակին իւր գործին այն մասերն ուղիղ բարեփոխելու։ Թէ գժուար է այս կարգի գրքի մը համար՝ որ արդէն ընդարձակ գրականութիւն ունի, մի անգամով լիակատար ուսումնասիրական թոզութիւն մը հրատարակել, համոզուած ենք, մանաւանդ այն պարագային՝ որ հեղինակը շատ մը գործեր չէ կրցած ձեռք բերել եւ գործածել։ Նոյն իսկ Լանգլուայի թարգմանութիւնն՝ զոր առաջին տպագրութեան համար երկասիրութիւնս պատրաստելու առեն առձեռն ունեցած էր հեղինակին, երկրորդ տպագրութիւնս սրբագրելու առեն չէ կրցած ձեռք բերել. (տես էջ Ա.Ը։) Ա.յս կէտը կը շեշտենք սնոր համար որ մեր քննադատութիւնը մի գուցէ կամաւոր պարտաւ մը համարուի, մինչդեռ մեր գիտումն էր գրքին կատարելութեան հանգանակել։

Վիեննա, 20 Մայիս 1898։ *Հ. Ճ. Տ.*

Գալուստ Տէր Մկրտչեան (Միաքան) Ազաթանգեղոսի աղբիւրներից։ Ճիշտուկ դատակնքաց Դորիա եւ Շմոնի վկայից որ վկայեցին յՈւտմ։ Վաղարշապատ 1896. 91 եր.։

* Այսագէտներին քաջ յայնի Գալուստ Տէր Մկրտչեան (Միաքան) Սարկաւագ բախտ ունեցաւ հայ թարգմանական գրականութեան մի հազուագիւտ յիշատակարանը գտնելու։ Ա.յս Գորիա եւ Շմոնի** վկայաբանութեան հնագոյն խմբագրութիւնն է։ Գալուստ Սրկ. որ ամենախոհ ուշադիր է գարձեալ հայ ձեռագիրների ուղղագրական եւ հնագրական երեւոյթների եւ թէ նոցա վրճռ կին[3], իւր հրատարակած յիշատակարանը Հայոց տրխագրութեան գոյնի պատմութեան մի աղբիւր է համարում, որ վերագրում են Ագաթանգեղոսին։ Իրաք, եթէ գանուել է Ագաթանգեղոսի պատմութեան բնական աղբիւրը, ապա հարցը պահանջում է նորա մասին մի նոր գրութիւն, եւ այս անգամ ուելի հաստատուն հողի վրայ։ Ա.յսպէս էլ նայում է գալուստ Ս. իւր հրատարակած յիշատակարանի

---

* *Մենք խոստման համեմատ կը հրատարակենք ներկայ մատենախօսականը, որ մեր խնդրանքը համձնցաւ ուսուցիչ Թարգմանիչ Աբժանապատիս Կոմիտաս Վ. ի Գերիս։* *Խմբ.*

** *Մենք Ծայսմատուրք կը յիշեն "Գուրիաս եւ Սամոնաս" անուամբ։* *Խմբ.*

1 Ուսաքին անգամ տպագրեցաւ "Լրատուի" մէջ 1896, եր. 385—392 (բնագիրը) եւ 425—440 (հետազոտութիւնը)։

2 Ա.յս նկատմամբ գ. Ցէր Մկրտչեանի զբօսոյնէ մատենագէտներին տալիս է շատ ուսանելի նիւթ, որը ասկսի չենք ուզում չշօշափել։ Ցուսում ենք, որ Էջմիածնի հետաքրքրասէր չէ նշանակել յ-ի գանագան ընթերցուածները (Հ. պ. եր. 33։) բնագրի հրատարակութեան մէջ. կը բաւեր իսկ այն բառերի ուղղագրական ցանկը տալը, որոնք առանց յ-ի են գրուել։ Ի գէպ, կարծես գ. Ցէր Մկրտչեանի իւր յուցած ուղղագրութեան մէջ երկու երեւոյթի է որոշում. 1. յ-ի բացակայութիւնը եւ 2. ի-ի տեղ. բայց վերջինս առաջին մանաւանդ արտայայտութիւնն է. այսինքն ի-ի մօտից յ-ի ընկնելը. որովհետեւ ի-ն հայերէն հին գրութեան մէջ կը-ի պայմանագիծն է։

digitised by A.R.A.R.@

վերայ ըստ իւր հեռուհեռ խօսքերի (Հ. գ. եր. 5)· "Գուշակիչք, Լայտարք, Սարգեանի, Ցաշեանի եւ ուրիշներուն Ագաթանգեղոսին նուիրած ուսումնասիրութիւններուն մէջ բերին որոշ եւ հաստատուն եզրակացութիւնները։ Ցունաբեր Ագաթանգեղոսն անպայման հայերէնէն է թարգմանուած· կարծեցեալ սորերէն բնագրի գոյութիւնը, որից իբր թարգմանուած է հայերէնը, խիստ տարակուսելի, անհիմն է եւ չապացուցած։ Ուրեմն մնում է միակ հաւանական գրութիւնն ընդունել՝ Ագաթանգեղոսի պատմութիւնը համարել Ե· դարու գործ, երբ հայերէն գրելու միակ հնարաւորութիւնը կար։ Այսպէս էլ ընդունում են շատ գիտնականներ, ենթադրելով որ Ագաթանգեղոսի զանազան մասերը կարող էին եւ առանձին գոյութիւն ունենալ, իբրեւ առանձին գործեր, բնագիր կամ թարգմանութիւն, որոնցից էլ կազմուել է Ագաթանգեղոսի պատմութեան յայտնի խմբագրութիւնը։ Բայց ամենք հաստատ մնալով հին կարծիքին, Ագաթանգեղոսի պատմութիւնը համարում են Դ· դարու գործ, ուրիշներ գրուած օտար լեզուով, ապա Ե· դարում հայերէն թարգմանուած։ Վարը ապագրուող վկայաբանութիւնը (Գործ ես Շմոն), մեր կարծիքով, բոլորովին լուծում է այս հարցը։"

Սակայն թէեւ մնգրով· Գաղտատ Ս·ի աշխատութեան մէջ իւր գրածն ճարպիկ եւ համոզիչ պատասխան չենք գտնում։ Բայց հրատարակչի գաղտողութեան եզանակին ակնյայտնի կերպով ապատյայտում է նորա այն համոզմունքը, թէ Գործ ես Շմոն վկայաբանութիւնն հայերէն թարգմանութիւնը Ագաթանգեղոսի պատմութեան մի այնպիսի աղբիւր է, առանց որի այդ պատմութիւնը չէր կարող գոյութիւն ունենալ· ուրեմն, ըստ հրատարակչի, գա պիտի լիներ նորա Ագաթանգեղոսի գլխաւոր աղբիւրներից մէկը։ Եւ որովհետեւ Գործ ես Շմոն վկայաբանութիւնը, հրատարակչի կարծիքով (Հ. գ. եր. 29—30) "թարգմանուած է հայերէն Ե· դարու երկրորդ կիսում, կամ, առնուազն, վերջին երեք քառորդում։" ապա ինքնին է ենթադրել, որ ա) Ագաթանգեղոսի պատմութիւնը գրուած է Ե· դարու առաջին կիսից յետոյ, եւ բ) ուղղակի հայերէն է գրուած· որովհետեւ հեղինակն օգտուել է յիշեալ "աղբիւրից" հայերէն թարգմանութիւնից։ Բայց Ագաթանգեղոսի պատմութեան կախուածը վկայաբանութիւնից մեր է պատասխանում։ Ագաթանգեղոսի պատմութեան հիմքերի փոխառութեանց մէջ՝ Ո՛չ։ Ագաթանգեղոսական մանրամասնութեանց մէջ՝ Ո՛չ։ Ագաթանգեղոսի պատմութեան ծրագրի փոխառութեանն մէջ՝ Ո՛չ։ Բանն այն է, որ մի կողմից Գործ եւ Շմոնի, միւսից Գրիգոր Լուսաւորչի կրած չարչարանքների նկարագրութեան մէջ նմանութիւններ են պատահում։ Այս նմանութիւնները, որ Տրատատեսիչին ամփոփել է 6—15 էջերում, բաժանում է երկու կարգի· Երկրորդ կարգը (10—15), որ հրատարակչի աչքումն էլ կարեւորութիւն չէ ունեցել, մենք էլ կարող ենք հանգիստ թողնել։ Իսու, որ վկայաբանութեան մէջ գաղտատ իր գործունքը չէ արտայայտել այն մարդկանց մասին, որոնք համ բերութեամբ իրենց կեանքը նուիրում են փրկչին։ Հնարաւոր տիրապետն մեր չէ յիշեցնում Քրիստոսի զինուորին, որ գաղտատում նոր հաստատ քարոզելու ժամանակը չէ, այլ լռելու· կամ մեր չէ յիշում անչէջ կրակը, կամ պատժից առաջ վերջին վայրկեանը, երբ աստրերը խնգրում են Աստուծուն իրենց արդարների խմբին միացնել։ Այս եւ նման բաներով էլ լցնում է երկրորդ կարգի նմանութիւնները։

Գաղտնիք նմանութիւններին, որոնք ըստ Գաղտատ Ս·ի անպայման նշանակութիւն ունին, (եր. 6) եւ նոր առանց հակաճառութեան ենթագրելիք, թէ Հայոց գրչի պատմութեան հեղինակը, յիշեալ ընդհանուր գծերով (եր. 6—8), իրաւ օգտուել է Գործ ես Շմոնի վկայաբանութենից։ Ագաթանգեղոսի այս փաստն ինքներին վերացնում է Հայոց գրչի պատմութեան մասին բնագրի գոյութեան կասկածութիւնը, կամ նոյն պատմութեան գոյութեան կասկածութիւնը մնչեւ Ե· դարը։ Անկարելի է, ուր քանի որ մենք չենք տեսնում Գրչի պատմութեան հեղինակի, արդեօք այս "աղբիւրը" Դ· դարում գոյութիւն ունեցող սորի բնագրից իսկ օգտուելու կարելիութիւնը վերացնող հանգամանքներ։ (տես մեր սորեբէ։)

Ենթադրենք, թէ Հայոց գրչի պատմութեան հեղինակն օգտուել է Գործ եւ Շմոնի հայերէն թարգմանութենից։ արդեօք հեռուհեռ է սորա նից, որ Գրչի պատմութեանը առաջին անգամ պէտք է գրուած լիներ միայն այս հայերէն թարգմանութենից յետոյ, որ այնպէս ծշդօրէն Գաղտատ Ս·ը յատկացնում է, չգիտենք ինչու, "Ե· դարու երկրորդ կիսին, կամ առնուազն երեք քառորդին"։ Այս հաստատելու համար Գրչի պատմութեան փոխառութիւնները վկայաբանութենից առաջը կարեւոր պէտք է լինէին, քան այն նմանութիւնները, որ առաջադրում է Գաղտատ Ս·ը։ Այս նմանութիւնները ատհմանափակում են ա), որ Գրիգոր Լուսաւորիչը ենթարկուել է նոյն չարչարանքին՝ կախուելով մի ոտից գլխիվայր Շմոնի պէս· բ) չարչարանքի ընթացքում Լուսաւորիչն աղօթում ու խնդրում էր Աստուծուց համբերութիւն Շմոնի պէս· գ) գրագիրները գրում էին քրիստոսի վհատութիւնի խօսքերը նոցա կախուելու միջոցին թէ Ագաթանգեղոսի պատմութեան, թէ վկայաբանութեան մէջ· եւ ապա կարգադրիչների հրամանով չարչարանքներին իջեցնում էին կախազանից· գ) կախուելու տանջանքը կրկնուում էր։

Շատ պատմ· ենք նկատել, որ ա, բ եւ գ կէտերում այս նմանութիւնները վերաբերում են ոչ միայն գլխաւոր կէտերին, այլ եւ նոցա մանրամասնութիւններին։ Ցիշեցնում ենք եւ այն, որ Ագաթանգեղոսի պատմութեան մէջ յիշեալ հանգամանքները պատմութեանը գաղտատ մանրամասնութիւններ են, որոնք մասնաւորապէս Գրիգորի կեանքի չարչարանքների չղջանին են վերաբերում, եւ ոչ թէ պատմութեան հիմնական վայրկեաններին կամ Գրիգորի կեանքին։ Այդ մանրամասնութիւնները վերջրած են այնպիսի չղջանից, ուր խնամ վատնգաւոր է յենակէտ որոնել յիշատակարանների բացատապէս գրական կապը հաստատելու համար։ Առաջին դարու քրիստոնեաների կրած

digitised by A.R.A.R.@

ամենքիանքներըը, ամէն տեղ, մեծաւորապէս նոյնն էին. իսկ Հայաստանի եւ Ասորիքի նման հարեւան երկիրներում, ուր տիրող քաղաքական եւ վարչական առվորութիւնները եւ նոր ծագող քրիստոնէութեան ոգին բոլ եւրիճան նոյն բնաւորութիւնն ունէին. եւ գաւառվարութեան ձեւական կողմը, իր պատիժներովն հանդերձ, նոր հաւասի մոլեռանդ հեռեւողների վերայ պէտք է նման լինէր իրապէս»։

Գալուստ Ս.ի ցոյց տուած նմանութիւնները, ընդունելիք, հաստատում են, այդ չէնք կարող մերժել, Ագաթանգեղոսի պատմութեան գրական կառուցմը Գոլթ ե Շմոնի վկայաբանութենից, միայն այն մտքով, որ Ագաթանգեղոսը նկատի ունի Ս. Գրիգորի յայտնի չարչարանքները, միանգամայն գուցէ օգտուել է Գոլթ ե Շմոնի վկայաբանութեան համանման արտայայտութիւններից. ենթադրելիք նոյն իսկ, որ կամենալու ամբողջ մանրամասները (ա. եւ ք. կէսերը) եւ գրագիրների (կէս ք.) միջադէպը, Ագաթանգեղոսը փոխ է առել վկայաբանութենից։ Եւ այն ժամանակ, բաւի բուն նշանակութեամբ, այդ յիշատակարանը, որ ազդել է հեղինակի ձեռ, կամ նոյն իսկ, որ տուել է մի կամ երկու մանրամասնութիւններ պատմութենը զարգարելու համար, չէ կարելի իսկական աղբիւր անուանել։ Այդպիսի յիշատակարանը պատմագրական աղբիւր կարելի է անուանել, բայց այն ժամանակ Գոլթ ե Շմոնի վկայաբանութենը՝ Հայոց գրչի պատմութեան աղբիւրը չէ, այլ այն խմբագրութեան աղբիւրը է, որի միջոցաւ այդ պատմութենը մեր ձեռքն է հասել, այն էլ, եթէ Գալուստ Ս.ի ցոյց տուած նման արտայայտութիւնները այն գրաւոր յիշատակարանների կենսագրական ընդհանուր ձեւեր չեն։

Ա յսպէս, յօգուտ Գալուստ Ս.ի կարծիքի, դուրս է գալիս, որ Հայոց գրչի պատմութիւն յիշատակարանի խմբագրութիւնը Ե. դարում (գուցէ եւ աւելի ուշ) օգտուել է իւր մի քանի մանրամասնութիւններով Գոլթ ե Շմոնի վկայաբանութենից։ Այս երեւոյթին անշուշտ հարցասիրական է, բայց դա շօշափելով հարցի լոկ արտաքին ձեւը, սահմանի չի յիշատակարանի վերայով եւ չէ դիպչում ոչ միայն ծագման, այլ եւ առհասարակ Ագաթանգեղոսի պատմութեան բովանդակութեանը. եւ այդ հարցն էլ, հենց Գալուստ Ս.ի հարցասիրական դիտողութիւններից յետոյ մնում է այն վճռակում, որպես եր Հ. Տաշեանի Ագաթանգեղոսի մասին կատարած վերջին աշխատութենից յետոյ[1]։

Եթէ Հայոց գրչի վերաբերութեամբ մենք ստիպուած ենք Գալուստ Ս.ի հայեացքը իւր հրատարակած վկայաբանութեան մասին չափազանցել միայն կողմից դէպ նշանակութեան վերաբերմամբ, որպէս Ասորիքի քրիստոնէութեան պատմութեան հնագոյն յիշատակարան, կարելի է միանալ Ս.ի գաղափարի հետ, որ նոյն իսկ ամենաստիպ ուշադրութեան է արժանի։ Բանականութեամբ կարելի է ենթադրել, որ Գալուստ Ս.ի գտած հայերէն թարգմանութիւնն աւելի է կարեւոր, քան բուն երեւելի հրատարակիչը է կարծում (Հ. գ. երկ. 40—41). հայերէն թարգմանութիւնը ոչ միայն «օգնում է հին վկայաբանութեան հաւատական բնագիրը վերականգնելու», այլ եւ նոր միակ ներկայացուցիչն է, որ «հեռու աստղական բնագիրն, քան երեւելին, կոլած է։

Վաղուց յայտնի էր այս վկայաբանութիւնը թէ Արեւելեան եւ թէ Արեւմտեան եկեղեցուն; բայց Միքէլ Քեռապրատի աւելի ուշ խմբագրութեամբ (Migne, Patr. g., CXVI, էջ 128—141), որ օգտուել է հին վկայաբանութենից, որպես կուտէ էր Cureton, (Anc. Syriac Docum., էջ 189), եւ աւելի վաղ Assemani, (B. O., I, էջ 329)։ Այդ խմբագրութեան Surius-ից փոխառած լատիներէն թարգմանութիւնը վերստին հրատարակել է Migne, Patrol. Gr., CXVI, էջ 127—142, եւ Cureton, Anc. Syriac Docum., էջ 113—124[1]։ Հայերէն տպուած էր (Վաղք եւ վկայաբանութիւնք սրբոց, Վենետիկ 1874, մասն Ա.։ էջ 273—277) նոյն խմբագրութեան համառօտը. որ եւ է յոյն խմբագրութիւնից է այն հատուածը, որ գետեղուած է Ցէր Խոյսէլի Վ.ոյ օրթոյում, Նովմեր 15-ին (Տր. Կ.Պոլիս, 1834, էջ 236—238), նոյնպես եւ Գրիգոր Տրեներցի Վ.ոյ օրթոյում (Ամսական Թանգարան)։ Աւգերեանի «Լիակատար վարք եւ վկայաբանութիւնք սրբոց»-ի մէջ, (Վենետիկ, 1813, VIII, էջ 437—444), զետեղուած է նոյնպես յոյն խմբագրութեան համառօտը, ձեռագրից վերցրած, տեղ տեղ «ուղղած» եւ լրացրած Քեռապրատի եւ այլոց Վ.ոյ օրթոցների հիման վերայ, ուր հրատարակիչը Քեռապրատի եւ այլոց զանազանութիւնները ցոյց է տալիս իւր ծանօթութիւնների մէջ (էջ 455 — 458)։ Գոլթ, Սահակ (տպած է Սիմոն) եւ Աբէթաց վկայաբանութեան վերջի թարգմանութիւնը, քան Ծ.Ա. դարի մի ձեռագրի (Հ. գ., էջ 221) տալիս է պ. Ծօզանեան (Տփղիս 1883, էջ 223)։

Մեր այս նահատակները, գեռ Հեռոմը, Ասորոց մէջ մեծ Հռչակ էին վայելում[2]։ Դ. դարում, Եդեսիայում, ի պատիւ յիշեալ տեղական նահատակների ծագեցաւ գաւառս սկզբին շինուած եկեղեցին (Assemani, Acta SS. Martyrum, I,

---

1 Տարակուսանքի աւելի լսալու համար, կարելի է նկատել յայտնել, որ մեր քննական նկատողութիւնների մէջ վկելի գաղձնելով արդ ցոյցնութիւնների հիմնաւորութիւնը, ասկան գրանով չենք ուզում վճռել գաղձնել այն ազգագրութ կարծիքը, որի համար յիշեալ ցոյցնութիւնների են բերուել, յատկապես այն արդարացի կարծիքը, թէ Ագաթանգեղոսի պատմութիւնը իւր արդի խմբագրութեամբ Ե. դարու դրած է, եթէ ոչ աւելի ուշ ժամանակի, կ'աւելացնենք մենք մեր կողմից։

1 Moesinger պատրաստում էր եդեսիայի նահատակների մասին մի ընդարձակ հրատարակութիւն Acta ss. martyrum edessenorum Sarbelii, Barsimaei, Guriae, Samonae et Abibi վերնագրով, բայց հրատարակեց, որքան մեզ յայտնի է, միայն Fasciculus primus: Acta ss. martyrum Sarbelii et Barsimaei Oeniponti 1874.

2 Նոցա յիշատակն Ասորիք ածում են Դեկեմբ. 15-ին քան ասորի ձեռագրի վկայութեան (Cureton Հ. գ., էջ 190—191)։

digitised by A.R.A.R.@

էջ 226)։ Դ. գաղտնի իսկ գովաբանեց ազգս Եփրեմ Ասորի իւր երգերով (Assemani, B. O., I, էջ 50)։ Սոյա իսկ նուիրեց Ճակոբ Սրճոյի (Դ—ե գ.) մի պարզ, բայց զգացուած ճառ, որի մասին յիշում է դեռ Assemani, (B. O., I, էջ 329—330)։ այս հրատարակեց անգլերէն թարգմանութեամբ, էջ 96—106 Cureton, Ancient Syriac Documents Խոյնը, էջ Լ—օ), (Ասորի բնագիրը հրատարակեց Bedjan, (Acta Martyrum et Sanctorum Parisiis, 1890, I, էջ 131—143)։ Ա.յս ճառը Գորիա եւ Շմոնի քաջութեամբ ոգեւորուած երկրագուի զգացմունքների քնարական արտայայտութիւնն է, ուր սակայն շատ քիչ յիշատակութիւն կայ սոցա կրած տանջանքների մասին, եւ գործի փաստական մասին ոչինչ չէ աւելանում։ Շատ աւելի առաջ նկարագրել էր յիշեալ սուրբերի չարչարանքի տուկնուքիւնը նոցա ժամանակակից ոմն նորադարձ Թէոփիլ, որպես կարելի է տեսնել սուրբ Եբիթայ (Cureton, Հ· գ·, էջ օո (անգլերէն թարգմանութեան 84) = Bedjan, (Acta M. et S., I, էջ 159) կեանքի ասորի գրութեան այս վերջաբանից· "Եա Թէոփիլը, հրաժարուած իմ հայրերի չար շահից եւ ընդունած քրիստոնէութիւն, ազատ ժամանակս Աբիբայ մասին այս յիշողութիւնները (ὑπομνήματα = ὑπομνήματα) գրեցի, որպես առաջ ես գրել էի (յիշողութիւնները) Գորիա եւ Շմոնի նահատակների՝ նորա ընկերների մասին, որը (Աբիբը) երանի էր տալիս (ἐμακάριζε) նոցա արամայ լինելուն եւ նմանեցնում նոցա կրակի բոցով պահուելով· եւ ես այդ նահատակների պատմութիւնը չէ պատմել՝, բայց նորա մէջ կան յայտնի ապացոյցներ, որ այս յիշատակարանը թարգմանուել է ասորերէնից· իսկ ասորի գրականութեան մէջ Գորիա եւ Շմոնի միայն մի վկայաբանութեան մասին տեղեկութիւն կայ, եւ այն Թէոփիլի գրածն է։ Ա.յս վկայաբանութեան, ըստ նորին հեղինակի յիշեալ հատուածի, վերնագիրն էր ամենայն հաւանականութեամբ, ὑπομνήματα. = ὑπομνήματα.

Ա.յս ὑπομνήματα[2] եւ ակներեւ, հայերէն թարգմանուած է "յիշատակ[3]„։

Ծիշատակարանի նորագիւտ թարգմանութեան ասորագրութիւններից մեր ուշքին ընկաւ "կանխեցի ասացի„ (243) վկայութ ասացի-ի մոգով· որն ասորի գարձուածքի բառացի թարգմանութիւնն է կատարեալով։

Նահատակ Շմոնի անունն էլ (Շմոնա = ὑπομνήματα, յունարէն Σαμῶνας) վկայում է հայերէն բնագրի ասորերէնից թարգմանուած լինելը։

Ըստ երեւոյթին ասորի բնագրից են անցել եւ հայերէն ալեպիսի ասորի բառեր, որոնք հայ գրականութեան մէջ անսովոր են.

1. փոխ[կայ (142 եւ 154) = ὑπόθεσις,
2. բեթ[թիկա (143) = ὑπὸ λόγος,
3. մդրիշայ (622) = ὑπόμνημα մոգիմանք, երգ։

Վերջին բառը գալատա Ս. կարդում է մդրիշայ, բայց պատճառն այն է, որ հայ գրութեան մէջ լ եւ չ դիւրութեամբ են շփոթում, եւ այդպիսի սխալ ընթերցումը հաւանօրէն արդէն ձեռագրներից է։

Հայ թարգմանութեան ժամանակը կարելի է մօտաւորապէս միայն սահմանել։ Շատ հաւանական է, որ գա կատարուած լինի ասորական շրջանում. այսինքն Հայոց գրականութեան առաջին գաթերում։ Շատ կարելի է նոյնպէս, որ այս թարգմանութիւնը հանի մինչեւ Ե. դարը, բայց գորա համար գլխաւոր ապացոյցը ոճի մոգրութիւնն է. իսկ գրաբարի ոճի մոգրութեան եւ լեզուի ճշդութեան հակացողութիւնը մեր մատաղ դիտութեան մէջ բաւական պայմանական է, եւ այդ նշանները միայն վերագրել այս կամ այն գարուն, կամ այս կամ այն քառորդ դարուն, հաւասար է գուշակութեան։*

Ծիշատակարանի մէջ կայ եւ մի բան, որից օգտուել կարելի էր թարգմանութեան ժամանակը որոշելու տեսակ։ Ծիշատակարանում պատահում են Ս· Գրէյդ մի շարք հատուածներ, որոնք մեր ձեռքը հասած հայերէն Աւետարանների ընթերցման համաձայն չեն, որը սրբագրուած է ուշ՝ յոյն եկեղեցականից բնագրի համեմատ։

Ա.յսպէս վկայաբանութեան 44—47 էջերում "եղանէք ոգի նոցա եւ գառնան ի հող իւրեանց եւ յայնմ աւուր կորիցեն խորհուրդք նոցա (Սաղմոս 145,[4])„ գանագանութեամբ է հայ վուլգատից =) բայերի նեղոյց ժամանակով (եղանէ, գառնան) փոխանակ ապառնւոյ (եղիցէ, գարձցին), եւ բ) է հող է-ից փոխանակ ածքին է հոդ բառերով։ եւ այս իսկ շեղումների մէջ վկայաբանութիւնը դնում է ասորի բնագրի տողմամբ (պէշիտտա) = յաղ, յաօ եւ բ) օչ;ի (է հոդ իւր· ասորականում խօսքը նոցա հոգու մասին է եւ ոչ նոցա)։

Ալպ Մաստ· ե· 37 գերանունը բացայայտիչից յետոյ դրած՝ քան յէր (վկայաբանութեան մէջ, 270 - 271· քանի մէջ) փոխանակ յէր բան-ի, որ նման է ասորի բնագրի տառացածի ընթերցման։

---

1 Գուցէ ժամանակով գառնալն գրութիւններ հեղինակի անունով։

2 Ա.յսպիսի յատնարէն եզրերի գոյութիւնն ինքնին հիմք չէ տալիս ասելու, թէ նոքա ծագումն ունին յատնարէնից· Շարքերի վերաց ասորի բնագրի այդպիսի յատնաբանութիւններն ի նկատի ունենալով Cureton պնդում էր, թէ նոքա յատնարէն են գրուած եղել (Ancient Syriac Documents, Notes, էջ 178)։

3 Հայ բնագիրն այս է լսվում· "Ծիշատակ գառնալոցն քաց Գորիա եւ Շմոնի վկայից, որ վկայեցին յԱտհաս„

---

* Հայերէն լեզուի իւրաքանչիւր գարու զարգացման քաղ տեղեակ եղողները կրնան ստոյգ որոշել թէ հայերէն բնագիր մը Ե. ոսկի դարուն կը վերաբերի, թէ յետագայ դարերու։ Ասոր մէջ գուշակութեան ակտը չկայ, այնպէս որոշ են նշանները։ ԽՄԲ.

digitised by A.R.A.R.@

Եթէ մի հնագոյն ձեռագիր ունենայինք, գուցէ աւելի նկատելի լինէր մեր յիշատակարանի Ս. Գրչից առած հատուածների եւ պէշտատայի որպէս եւ հայերէն առաջին թարգմանութեան նմանութիւնը, բայց Գալուստ Ս.ի ձեռքումը կային այս յիշատակարանից երկու օրինակ, որ հրատարակչէ առելով, ուշ ժամանակի եւ մօտաւորապէս մի եւ նոյն գարու՝ (ԺԲ) գործ են։

Ա.հասաբակ այս ձեռագիրները հագիւ թէ ներկայացնում են բնագրին նախնի դրութիւնը. մանաւանդ աղճատուած են թուում մեզ յատուկ անուանները։ Բայց Գալուստ Ս.ի գտած թարգմանութիւնը իւր արդի ձեւովն այս յիշատակարանի պատմութեան համար հետաքրքրական է։

Մեռափրատի յոյն խմբագրութեան եւ ասորի բնագրի մէջ, որպէս այդ ներկայացնում է հայ թարգմանութիւնը, մեծ տարբերութիւններ չկան երեւում, բայց եւ այնպէս տարբերութիւններ կան։ Դշնաակիչք նոցանից էականները.

ա) Հայերէն բնագիրն ընդարձակ է 87—98, 179—192, 423—435, 459, 366, 569—601,

բ) Հայերէնում այլապէս է պատմուում Նահատակների վերջալ մասնէլը (305—310) եւ սրբերի աղօթքը կամման ժամանակ (348—379)։

գ) Ցոյն բնագրում բոլորովին բաց են թողնուած 255—271. 565—568 եւ 602—638։

Մի քանի տեղ (115, 490 եւ 564) յոյն բնագիրը մի քառ, կամ նոյն իսկ ամբողջ նախադասութիւններ աւելի ունի։ Մանր զանազանութիւններ էլ են նկատելի. այսպէս հայերէն «Ի Ծ֊ծքին» (67) յունարէնում կարդում ենք ἐν τοῖς Μαρτυροπόλεως μεθορίοις.

Հասկանալի է, որ Գորիս ի֊ Շուռի վիճակնախնիան ապագայ ուսումնասիրողը բանական ուշադրութ է լինելու Գալուստ Ս.ի գտած եւ հրատարակած թարգմանութեանը։

Ն. ՄԱՌ

ԼՒՕ – Մէլիքի աղջիկը, պատմական վէպ։ Արտատպած Մշակ լրագրից։ Թիֆլիս, 1898, փոքր 8°, 755 էջ։ Գինն՝ ք. 1·30։

Ընդհակառակ դարու հայ վեպագրութեան, որ՝ Լէօի ճարտար գրչէն եւս 755 էջերը՝ 6—7 ժամու մէջ լափիլ սպառնալ կու տան ընթերցողին։ Իւրաքանչիւր էջով՝ հետաքրքրական բլուրներ կը փոխուին, վերջիններն ահագին լեռներու շղթայ մը կը կազմեն, որոց մէջ թեպետ գարձեալ՝ բարեբախտաբար շատ շնչին թուով, բլրակներ կը նշմարուին, բայց մինչեւ էջ 705 ապահովապէս հետաքրքրական սարաբարձր գագաթներ են, ուր հեշտեւս կը թափի միտքն ու աչքը...»

Եթէ քննութեան տակ պիտի ձգենք «Մէլիքի աղջիկը», պատճառը շատ յայտնի է. այս պատմական վէպը կրնար եւ պէտք էր այս տասնեակին մէջ քանի մը անգամ կրկնուիլ..., եւ կը կրկնուէր՝ եթէ այրական հեղինէներ (էջ 333 եւ 581) պակսէին... եւ մանաւանդ գայիանէներ — վէպին դիւցազնուհին — բազմապատկուէին ու հաղարապատկուէին։ Թող որ այս գրուածիչ կէսին կը միանայ վարժ, սահուն, մանրիչ գրիչ մը, որ շատ տեղ զՔաֆֆին կը յիշեցընէ։

Գիրքն յառաջաբան, ցանկ, գլխակարգութիւն եւայլն չունի, բայց «Մէլիքի աղջիկը» անուան մէջն են այս մեր ամէն փնտռածները...։ Վարանդայի Աւետարանոց գիւղն է տեսարանը, որուն՝ տիրող իշխանը Մէլիք-Ցուսէին (Ցովսէփ) մեծ անուն կը հանէ (44)։ Միեւնոյն ժամանակ ի Ղարաբաղ 5 հայ մելիքներ, եւ ի Սիւնիք՝ դաւիթ բէկ, այս երկիրներու ազատութեան համար յուսատու միջնորդութիւններ, ազատասիրներ կ'որոնեն, կ'որոնուին մեծամեծ խոստումներով, որ եղած էին 1701ին։ Ցոյսը կը մնայ — յոյս, իսկ Մէլիք-Ցովսէփ մինչ այս մինչ այն՝ կ'երթայ մահկանացուից ձամբան, յանձնելով վարանդայի ամրոցը՝ ազատութեան ամբարտակը, իւր կնոջ՝ Ազնա-խաթունին. օրինակ այրասիրութեան (50). կրակատ, վախճանագէտ կնիկը կը տիպոխ առ երեսս զիչանիչ Դիւզակի տիրոջ՝ Մէլիք-Ազանին, իւր եղբօրը (52) խոհեմութեան։ Մէլիք-Ցովսէփին օրէնքը վառ կը մնայ իւր երկք զաւակաց վրայ. Ցովհէփ, խեղճութեամ ու ծանրամիտ, բայց պատուոյ զգածման տէր, իւր ապագայ Մէլիքութեան (736) կը յայտնէ իւր արժանատութիւնը՝ քաջութեան օրինակ առնելով վէպին դիւցազնուհին (455)։ Շահնազար վատն ու մատնիչ, օրինակ բռնապետութեան՝ իւր օրինակ ապագայ զազրագործութեանց (201) «շուն» անունը կը ժառանգէ (365)։ Գայիանէ՝ ամբողջ այս պատմութեան շունչն ու հոգին, 18 տարուան (641, 706), որուն անուան վրայ կատարուած է վարանդայի ազատութեան շէնքը։ «Մէլիքի-աղջիկը»։ Լաւ կրթուած, ի քնէ ժտեալ ձիրքերով, որ կ'արժանացընեն զինքը վէպին ներսոսնելի բարձրանալու. բայց ձիրքերուն վերջինը չէ իւր հաստատամտութիւնն, որ չի ճանչնար արգելք, կ'արհամարհէ վերներտութիւնը, զոր կը գտատպատրէ յանձին իւր իսկ նշանածին՝

---

1 Բնագիրը հրատարակել է Գալուստ Ս. իսկ յատուկ հոգատարութեամբ, թէեւ ոչ առանց սպազրական սխալների. չէնոցաւոն (156) փոխանակ չինոցաւոն, խաչէ (376) փոխանակ ձեռագրի խաղէ֊ն, ըստ Գալուստ Ս.ի յօդուածի էջ 14։

digitised by A.R.A.R.@